# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/8 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 6 | «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ | Բաճկոնը կիսաբամբակյա, կանաչ գունաքողարկված անջրանցիկ կտորից է, աստառը՝ մետաքսյա: Կտորի բաղադրությունը 50-52% բամբակ, 48-50% պոլիէստեր, խտությունը՝ 180-220 գրամ մ2, իսկ երանգը համաձայնեցվում է Գնորդի հետ: Բաճկոնը կոճկվում է կափույրով ծածկվող կայծակաճարմանդով: Կրծքամասում ունի երկու վրադիր գրպան՝ կափույրներով և կպչունակներով: Ունի նաև երկու ներկարված կողային գրպան: Առջևի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Ուսադիրների ամրակները կպչունակներով և գունաքողարկված կտորից են: Տաբատն նույն բաճկոնի կտորից է, ուղիղ կարվածքով է՝ երկու կողային ներկարված գրպանով, հետևի մասում՝ մեկ գրպանով, առջևի մասում տեղադրված է կայծակաճարմանդ, աստառը՝ մետաքսյա: Կեպին նույն կտորից է՝ հովարով: Թասակը շրջանաձև է: Փոքր գլխարկանշանն ամրացվում է ճակատային մասում (Նկար՝ 3): Տեխնիկական բնութագրի ընդհանուր պայմանները և հանդերձանքի նկարները ներկայացված են կից՝ հավելված 1-ում: ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2022թ.-ի ընթացքում անհրաժեշտ քրեակատարողական ծառայողների հանդերձանքի |

| | | |
|---|---|---|
| | | տեխնիկական բնութագրի վերաբերյալ: Ընդհանուր պայմաններ՝ 1. Քրեակատարողական ծառայության խորհրդանշանը կիսաձվաձև է, բարձրությունը՝ 100 մմ, լայնությունը՝ 78 մմ, Վաճառողի կողմից կարվում է բոլոր ձմեռային կիսաբրդյա վերարկուների, ձմեռային գունաքողարկված վերարկուների, կիսաբրդյա կիտելների, կիսբրդյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, ձմեռային դաշտային բաճկոնների, վերնաշապիկների, սվիտերների և շապիկների ձախ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև: Խորհրդանշանի վրա պատկերված են ոսկեգույն վահան, թուր, Հայաստանի Հանրապետության զինանշանը, դրոշը և կշեռք: Վահանի վերևում գրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևում՝ «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» (Նկար 4): 2. Քրեակատարողական ծառայության պետի և տեղակալների (5 ծառայողներ) բոլոր ձմեռային կիսաբրդյա վերարկուների, ձմեռային գունաքողարկված վերարկուների, կիսաբրդյա կիտելների, կիսբրդյա բաճկոնների, դաշտային բաճկոնների, ձմեռային դաշտային բաճկոնների, վերնաշապիկների, սվիտերների և շապիկների աջ թևքին՝ ուսակարից 70 մմ ներքև, Վաճառողի կողմից կարվում է նաև 100 մմ բարձրությամբ և 78 մմ լայնությամբ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը (Նկար 5): 3. Գնորդի պահանջով հանդերձանքի ընդհանուր քանակի մինչև 10%-ի չափով Վաճառողը պարտավոր է կատարել անհատական չափսերի վերցնում և անհատական կար: 4. Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, նմուշը համաձայնեցնելուց հետո Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը, որից հետո կմատակարարվեն ապրանքները: 5. Բոլոր ապրանքները պետք է ունենան համապատասխան պիտակավորում և փաթեթավորում: Փաթեթավորման պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, ամիսը և տարեթիվը: Մատակարարումը և բեռնաթափումը իրականացվելու է աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն մատակարների միջոցներով և հաշվին: 6. Անհրաժեշտության դեպքում՝ Գնորդի պահանջով, Վաճառողը պարտավոր է, իր միջոցների հաշվին, մատակարարված ապրանքի խմբաքանակը, ՀՀ պետական հավաստագիր ունեցող լաբորատոր հետազոտական կենտրոններից մեկում, ենթարկել լաբորատոր փորձարկման՝ ապրանքի որակի և տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը ստուգելու նպատակով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/8 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 6 | | |